Քաղաք Արխանգելսկի /Ռուսաստանյան Դաշնություն/ և քաղաք Ջերմուկի /Հայաստան Հանրապետություն/ միջև

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հաշվի առնելով բարեկամության և համակողմանի համագործակցության զարգացման՝ Արխանգելսկ /Ռուսաստանյան Դաշնություն/ և Ջերմուկ /Հայաստանի Հանրապետություն/ քաղաքների բնակիչների ձգտումը, ընդունելով, որ զարգացնելով երկկողմ մշակութային և մարդասիրական կապերը, պայմանավորվող կողմերը կարևոր ներդրում կունենան փոխըմբռնման, խաղաղության, ազգամիջյան համաձայնության, Ռուսաստանյան Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև բարեկամական համակողմանի կապերի զարգացման գործում, ՝՝Քաղաք Արխանգելսկ՝՝ մունիցիպալ կազմավորման վարչակազմը, ի դեմս ՝՝Քաղաք Արխանգելսկ՝՝ մունիցիպալ կազմավորման Ղեկավար Իգոր Վիկտորի Գոձիշի և Ջերմուկ քաղաքի քաղաքապետարանը՝ ի դեմս կանոնադրության հիման վրա գործող Ջերմուկ քաղաքի քաղաքապետ Վարդան Էդիսոնի Հովհաննիսյանի, որոնք հետայսու կոչվելու են ՝՝Կողմեր՝՝, պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.

1. Երկու կողմերը, հիմնվելով հավասարության ու փոխշահավետության սկզբունքների վրա, ղեկավարվելով Ռուսաստանյան Դաշնության և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ՝՝Քաղաք Արխանգելսկ՝՝ մունիցիպալ կազմավորման և Ջերմուկ քաղաքի մունիցիպալ իրավական ակտերով, պետք է իրագործեն փոխանակման և քաղաքների կենսագործունեության համագործակցության ծրագրեր ամենատարբեր ոլորտներում՝ մունիցիպալ կազմավորումների իրավասության շրջանակներում:
2. Կողմերը պատասխանատու անձանց են նշանակում իրենց վարչակազմերից՝ ներկա Համաձայնագրի կատարման համար:
3. Կողմերը, օգտագործելով զանգվածային լրատվության միջոցները, պարբերաբար պետք է իրազեկեն իրենց քաղաքների բնակիչներին՝ ներկա Համաձայնագրի կենսագործման ընթացքի վերաբերյալ:
4. Ներկա Համաձայնագրի կենսագործման հետ կապված ծախսերը կողմերից յուրաքանչյուրն ինքնուրույն է կրում, ղեկավարվելով Ռուսաստանյան Դաշնության օրենսդրությամբ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ,

´´Քաղաք Արխանգելսկ´´ մունիցիպալ կազմավորման և Ջերմուկի քաղաքապետարանի մունիցիպալ իրավական ակտերով, ինչպես նաև ընդունված կարգով, բացառությամբ թիվ 5 կետով նախատեսված դեպքերի:

5. Պաշտոնական պատվիրակությունների այցելությունների հետ կապված ծախսերը հոգում է ընդունող կողմը, համաձայն Ռուսաստանյան Դաշնության օրենսդրության և Հայաստանի Հանրապետության օրենսդրության, ´´Քաղաք Արխանգելսկ´´ մունիցիպալ կազմավորման և Ջերմուկ քաղաքի մունիցիպալ իրավական ակտերի՝ տվյալ նպատակների համար նախատեսված համապատասխան բյուջետային հատկացումների սահմաններում:

6. Ներկա Համաձայնագրի կետերի մեկնաբանման ու կիրառման հարցերում հնարավոր տարաձայնությունները, ինչպես նաև կենսագործման ընթացքում ծագած վիճելի հարցերը, Կողմերի կողմից կլուծվեն բանակցությունների և խորհրդակցությունների ճանապարհով:

7. Ներկա Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում վերջինիս ստորագրման օրվանից և անժամկետ է հանդիսանում: Կողմերի փոխադարձ համաձայնությամբ, Համաձայնագրում կարող են փոփոխություններ ու լրացումներ արվել:

8. Կողմերից յուրաքանչյուրը կարող է լուծել Համաձայնագիրը՝ մյուս կողմին տեղյակ պահելով ոչ պակաս, քան վեց ամիս առաջ:

9. Ներկա Համաձայնագիրը ստորագրված է երկու օրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և ռուսերեն լեզուներով, որոնցից մեկը գտնվում է Ջերմուկ քաղաքի քաղաքապետարանում, երկրորդը՝ ´´Քաղաք Արխանգելսկ´´ մունիցիպալ կազմավորման վարչակազմում: Երկու օրինակներն էլ միանման իրավական ուժ ունեն:

´´Քաղաք Արխանգելսկ´´ մունիցիպալ կազմավորման Ղեկավար

Ի.Վ.Գոձիշ

Ջերմուկ քաղաքի քաղաքապետ

Վ.Է.Հովհաննիսյան

Արխանգելսկ

09 ապրիլի 2018 թ.

СОГЛАШЕНИЕ О СОТРУДНИЧЕСТВЕ

между городом Архангельском (Российская Федерация)
и городом Джермуком (Республика Армения)

Принимая во внимание стремление жителей городов Архангельска (Российская Федерация) и Джермука (Республика Армения) развивать и укреплять отношения дружбы и всестороннего сотрудничества, признавая, что развивая двусторонние культурные и гуманитарные связи, обе договаривающиеся стороны будут вносить важный вклад в дело взаимопонимания, мира, межнационального согласия и развития дружественных всесторонних отношений между Российской Федерацией и Республикой Арменией, Администрация муниципального образования «Город Архангельск» в лице Главы муниципального образования «Город Архангельск» Годзиша Игоря Викторовича, действующего на основании Устава муниципального образования «Город Архангельск», и Мэрия города Джермука в лице мэра города Джермука Оганесяна Вардана Эдисоновича, действующего на основании Устава, именуемые в дальнейшем «Стороны», договорились о нижеследующем:

1. Обе стороны будут осуществлять, основываясь на принципах равенства и взаимной выгоды, руководствуясь законодательством Российской Федерации и законодательством Республики Армении, муниципальными правовыми актами муниципального образования «Город Архангельск» и муниципалитета Джермука, программы обмена и сотрудничества в различных областях жизнедеятельности городов в пределах компетенции муниципальных образований.

2. Стороны назначают из числа сотрудников своих администраций лиц, ответственных за исполнение настоящего Соглашения.

3. Стороны будут регулярно информировать население своих городов о ходе выполнения настоящего Соглашения, используя средства массовой информации.

4. Расходы по исполнению настоящего Соглашения несет каждая из сторон самостоятельно, руководствуясь законодательством Российской Федерации и законодательством Республики Армении, муниципальными правовыми актами муниципального образования «Город Архангельск» и муниципалитета Джермука, а также сложившимся порядком, за исключением случаев, предусмотренных в пункте 5.

5. Расходы, связанные с пребыванием официальных делегаций, несет принимающая Сторона в соответствии с нормами приема иностранных делегаций, установленными законодательством Российской Федерации и законодательством Республики Армении, муниципальными правовыми актами муниципального образования «Город Архангельск» и муниципалитета Джермука, в пределах бюджетных ассигнований соответствующего бюджета, предусмотренных на эти цели.

6. Возможные расхождения в толковании и применении положений настоящего Соглашения, а также возможные спорные вопросы, возникающие в ходе реализации, решаются Сторонами путем переговоров и консультаций.

7. Настоящее Соглашение вступает в силу со дня его подписания Сторонами и является бессрочным. По взаимному согласию Сторон в Соглашение могут быть внесены изменения и дополнения.

8. Каждая из Сторон вправе расторгнуть Соглашение, известив другую Сторону в срок не менее чем за шесть месяцев.

9. Настоящее Соглашение подписано в двух экземплярах, каждый на русском и армянском языках, один из которых находится в Мэрии города Джермука, второй – в Администрации муниципального образования «Город Архангельск». Оба экземпляра имеют одинаковую юридическую силу.

Глава муниципального образования «Город Архангельск»	Мэр города Джермука
И.В. Годзиш	В.Э. Оганесян

Архангельск
09 апреля 2018 года